

**ՈՎ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԻ ԽՕՍԵԼՈՒ ՅԱՆՈՒՆ ՍԷՎՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ**

(2)

Ա. Տ Ա Ր Ի. — Թ Ի Ի 5 || Գ Ի Ն 75 Ս Ա Ն Թ Ի Մ || Բ Ա Ր Ի Զ Ե Ս Մ Թ 15 Ծ ՈՒՆՈՒՄ 1921

ԲԱՅԱՆՈՂՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երոպա 40 ֆրանկ Տրկմ. 25 Անջամու.
Ամերիկա 5 Տոլար " 3 "
Քուրդիստան 400 դր. " 250 "
Եգիպտոս 100 դր. " 60 "

**ԱՊԱԳԱՅ**

Հասցեակրթիկ  
 ՀԱՅ ՌԱՍԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 ԲԱՐՁԻ ԱՎՈՒՍՏԻՆ

Խնայարարական և ժառանգական ժողովրդական համայնական կենտրոնի և ժողովրդական կուլտուրայի կենտրոնի  
 50, Rue de Paradis — Paris (X<sup>e</sup>)

«ԱՅԱԿԱ» (l'Avenir) Journal hebdomadaire arménien

Ք Ա Ղ Ա Ք Կ Կ Ա Ն Ե Կ Կ Ա Ն Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

**ՈՎ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԻ ԽՕՍԵԼՈՒ ՅԱՆՈՒՆ ՍԷՎՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ**

Կ. Պոլսոյ «Սասնա ծռեր» թերթը 50 Դեկտ. ին հրատարակեց բնագիրը այն դաշնագրին, որ Դեկտ. 2 ին Աղէքսանդրապոլի մէջ ստորագրուած էր մէկ կողմէն նախկին վարչապետ Խատիսեանի և յայտնի դաշնակցական լիար կիւլտանտանեանի, միւս կողմէն Քեաղիմ Գարա Պէքիբի միջև:

Այս դաշնագրին զայն ստորագրողներուն և ամբողջ ազգին համար ինչ ամօթալի փաստաթուղթ մը բլլալը ցոյց տալու մտքով մէջ կը բերենք քանի մը յօդուածներու ամենէն կարեւոր մասերը.

Յօդուած 3.— Ե.յս ասթիւ կը հաստատուի թէ, ինչպէս ցոյց կուտան թուրք և ռուս և ամբողջ աշխարհի վիճակագրութիւնները և հաստատուած բնկերային կացութիւնը, օսմանեան սահմաններուն մէջ (այսինքն ՅԱ ԷՆ, առաջուան սահմաններուն Ծ. Խ) ոչ մէկ տեղ Հայերը մեծամասնութիւն չեն կազմեր:

Յօդուած 6.— Երեւանի Հանրապետութիւնը յանձն կ'առնէ զինուորական ոչ մէկ կազմակերպութիւն թող տալ բացի ներքին անդորրութիւնը պահպանելու համար բուսականաչափ և թեթև զենքերով զինուած սասիկան զինուորներէ և երկրին սահմանազուխը պաշտպանելու համար ութը լեռնային կամ դաշտային թրնթանօթներով և քսան միթրայլեօդով զինուած հաղար հինգ հարիւրնոց զօրախումբի մը: Հայաստանի մէջ պարտաւորիչ զինուորական ծառայութիւն պիտի չկիրարկուի:

Յօդ. 7.— Լաշաուիթենե կօր Երեւանի մէջ բնակելիք թուրք զիւանագիտական ներկայացուցիչը պիտի կրնայ քննութիւն կատարել այս պայմանին գործադրուած ըլլալը հաստատելու համար. ստոր փոխարէն, երբ Լայի հանրապետութեան ուզէ, Թուրքիոյ ազգային մեծ ժողովը Լայաստանի պիտի օգնէ զենքով ներքին և արտաքին վտանգներու դէմ:

Յօդ. 11.— Երեւանի կառավարութիւնը կ'ընդունի և կը հռչակէ թէ չեղեալ կը նկատէ Սէվրի գաշնագիրը, որ վերջնական կերպով մերժուած է թուրք ազգային մեծ ժողովի կառավարութեան կողմէն: Երկու կառավարութիւններուն միջև ամէն տեսակ թիւրիմացութիւնները բաձնալու համար Երեւանի կառավարութիւնը յանձն կ'առնէ ետ կանչել Եւրոպայի և Ամերիկայի իր պատուիրակութիւնը, որ գրգռութեան գործիք մըն է կարգ մը կայսերապաշտ կառավարութիւններու և քաղաքական շրջանակներու ձեռքին մէջ:

Յօդ. 13.— Թուրքիոյ ազգ. մեծ ժողովը թուրքիոյ հողային ամբողջութիւնը և անկախութիւնը վտանգելու բնոյթ ունեցող բոլոր յարձակումներու դէմ կրնայ առժամայէտ զինուորական արգելիչ միջոցներ ձեռք առնել Լայաստանի մէջ:

Ինչպէս կը տեսնուի, Երեւանի դաշնակցական դահլիճը, որ ինքզինք Մայիս 28 ի արթնով հռչակած էր Միացեալ Հայաստանի կառավարութիւն, այս դաշնագիրով ոչ միայն կը հրաժարի Սէվրի դաշնագիրէն, այլ կ'ուրանայ ամբողջ թրքահայ դատը (յօդ. 5):

Այս դաշնագրին թշնամիին բռնութեան տակ ստորագրուած ըլլալը մեղմացուցիչ պարագայ մը չի կրնար ըլլալ այն կառավարութեան համար, որ պատասխանատու է մեր զինուորական պարտութիւններէն: Եթէ յաղթական թշնամին տուն կուտար իր նուաստացուցիչ պայմանները, Երեւանի դահլիճը, կամ ուրիշ բառով Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան սիւրճ, ամէն ազատութիւն ունէր, զայն չստորագրելու համար, օր մը առաջ քաշուելու և իր տեղը տալու պօլշեւիք կառավարութեան, որ կրնար մերժել ինչպէս ալ ըրաւ: 918ին միեւնոյն թուրքին սուրբ դրուած էր հայ ժողովուրդին կոկորդին վրայ, երբ հայ ժողովրդական կուսակցութեան մասնակցութեամբ Պաթումի մէջ կնքուեցաւ ծանօթ դաշնագիրը, շատ աւելի սրտուարքեր քան 920ի Աղէքսանդրաբոլի դաշնագիրը: Պաթումի դաշնագիրով թուրքերը փոխադարձ պարտաւորութիւններ կը ստանձնէին, ինչպէս՝ յարգել Հայաստանի հողին չեզոքութիւնը և Հայերէն զինուոր չառնել, մինչդեռ Աղէքսանդրաբոլի դաշնագրին 14րդ յօդուածը Հայաստանի սահմանները կը բանայ թուրք բանակներուն առջև: Պաթումի դաշնագիրով Հայաստան պիտի ունենար երկու զօրաբաժին (52,000 զինուոր), մինչդեռ Աղէքսանդրաբոլի դաշնագիրը այս թիւը կը զեղչէ 1,500ի: Հոս



կարժէ յիշել այն բողոքը, զոր բարձրացուցած էր 918ին գաշնակցական  
մամուլը, բնկով թէ երկու զօրաբաժինը քիչ է Հայաստանի համար: Ինչ  
նք սակայն ամենէն աւելի կարեւոր է, Պաթուսի գաշնադիրով երեւանի  
կառավարութիւնը՝ ոչ մէկ խօսք կ'ընէր Թրքահայոց և Թրքահայաստանի  
մասին, ինքզինք նկատելով միմիայն ռուսահայկական կառավարութիւն:

Եւ 918ին Թուրքիա շատ աւելի հզօր էր քան այսօր:

Անոնք որ յամառեցան չ'սրբադրել Մալխա 28ի աքթը և իբրեւ Միաց-  
եալ Հայաստանի կառավարութիւն ստորագրեցին Աղէքսանդրաբոլի գաշ-  
նադիրը, այսօր այլեւս չեն կրնար խօսիլ ոչ յանուն Հայաստանի, ոչ ալ  
յանուն Թրքահայ ժողովուրդին, որուն այնքան զոհարեբութիւններով շահ-  
ուած գատը չ'սղձահարեցան սերանալու հանդիսաւոր կերպով:

Մեզի համար աւելի ծուլ մըն է մտայնութիւնը անոնց, որոնք Սէվ-  
րի գաշնադիրը մէկ ձեռքով մերժելէ ետք, զայն կը շարունակեն պահանջել  
իրենց միւս ձեռքով, մինչդեռ շատ տրամաբանական պիտի ըլլար Սէվրի  
գաշնադիրով ապահովուած մեր իրաւունքներուն սրաշտպանութիւնը յանձ-  
նել Թրքահայոց միակ ներկայացուցիչը եզող Ազգային Պատուիրակութեան:

Աղէքսանդրաբոլի գաշնադրութեան օրը երեւանի գաշնակցական  
կառավարութիւնը եթէ ինքզինք իրաւունք ունէր նկատելու ամբողջական  
Հայաստանի կառավարութիւն, գաշնադրութեան օրէն ետք այլեւս գործ-  
նականապէս կը դադրէր այդ հանգամանքը ունենալէ, եթէ նայն իսկ շա-  
րունակէր, հակառակ հայ սօլշեւիք կառավարութեան մը հաստատուած  
ըլլալուն, իր գոյութիւնը սրահել Հայաստանի մէկ անկիւնը կամ օտար  
հողի վրայ:

Մինչդեռ մենք գիտենք՝ որ, գաշնակցական վերջին գահլիճն էր որ  
Վրացեանի բերնով հռչակեց սօլշեւիքեան իշխանութիւն և անկէ ետք  
բաշտեցաւ, այսպէս լուծելով ինքզինք:

Շատ լսեցինք Ազրպէյճանի ազգայնական և Քէրէնսկիի չափաւոր  
կառավարութիւններուն և արտասահմանի անոնց ներկայացուցիչներուն  
բողոքաւորութիւնը Հայկ. Հանրապետութեան նախկին պատուիրակութեան  
և իբրև թէ անոր ներկայացուցած անգոյ կառավարութեան մը հետ: Ազ-  
գայնական Ազրպէյճանը և Քէրէնսքի իրապէս ըմբոստ կառավարութիւն-  
ներ էին և սօլշեւիքներու հետ քօսալիսիօն չէին կազմած, ինչպէս ըրաւ Լ.  
Յ. Դաշնակցութիւնը: Պէտք չէ մոռնալ մանաւանդ որ, Ազրպէյճանի եւ  
Ռուսիոյ հակասօլշեւիք տարրերը իրենց գատը ունէին միմիայն Ռուսիոյ  
հողին վրայ, մինչդեռ հայկական գատը կը գանուի սուսիոյ հողէն դուրս:

Հայկ. հանրապետութեան նախորդ պատուիրակութիւնը եթէ շարու-  
նակէ իր գոյութիւնը պահել, ծառայութիւն մը չի մատուցաներ սուսա-  
հայերուն, որոնց Ֆիզիքական գոյութեան մտահոգութիւնը կը պահանջէ  
որ բմբուս կառավարութեան մը խօսքը չըլլայ Ռուսահայաստանէն ներս,  
իսկ թրքահայաստանի համար անիկա այլեւս ո՛ր և է հանգամանք չի ներ-  
կայացնէր, իբրև ներկայացուցիչը կառավարութեան մը, որ ինքզինք լու-  
ծելէ առաջ ուրացու թրքահայ դատը:

Այդ կառավարութիւնը նոյն իսկ ինքզինք չուծած, Պ. Օհանջան-  
եանի բերնով բաժն էր, Բարիդ հասած Հոկտ, 29 թուակիր պաշտօնագրի  
մը մէջ, թէ այլեւս պատուիրակութիւններու հարկ չկայ, քանի որ Սէվրի  
գաճնագիրը ստորագրուած է և Միացեալ Հայաստանի կառավարութիւնը  
գաճնակիցներու մօտ պիտի ունենայ դիւանագիտական ներկայացուցիչներ:

Միացեալ Հայաստան այսօր իր սուսահայ օղակը — հող չէ թէ առ-  
ժամարար — կորսնցուցած է, իսկ բուն թրքահայ դատը կը ներկայացուի  
Ազգային Պատուիրակութեան կողմէ, որուն յարգելի նախագահին հանդէպ  
իր վստահութիւնը կրկնած է Ամենայն Հայոց Հայրապետը իր վերջին կան-  
դակով և որուն հետեւած քաղաքականութիւնը վաւերացուցած են Կ. Պօլ-  
սոյ և Կիլիկիոյ ազգային իշխանութիւնները:

Ուրեմն, եթէ այսօր կայ մարմին մը որ իրաւունք և իրաւասութիւն  
ունի խօսելու յանուն Սէվրի գաճնագրին, Ազգային Պատուիրակութիւնն է  
այն, որմէ դուրս կատարուած բոլոր ձեւնարկներն ու ջանքերը միայն  
վնասակար կլնան ըլլալ մեր դատին համար:

27.08.2017

WAN

©Western Armenia News